

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱ

### ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

05.06. 2017թ. ուղարկված նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք մեր կարծիքը և հետևյալ առաջարկությունները.

1. Կարծում ենք, որ կազմակերպության մասնակցին, բաժնետիրոջը, փայտատիրոջը անտոկոս կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի 50 տոկոսից ցածր տոկոսով փոխառության տրամադրումը որպես շահաբաժին դիտարկելը տարածված չէ միջազգային պրակտիկայում: Նախապես խորհրդի քարտուղարություն էինք ներկայացրել էինք փոխառությունների հարկման միջազգային փորձի ընդհանուր նկարագրությունը, համաձայն որի սովորաբար 2 մոտեցում գոյություն ունի միջազգային պրակտիկայում՝
  - ✓ Պարտքի առավելագույն չափի սահմանում, որի տոկոսագումարները նվազեցվում են,
  - ✓ Նվազեցվող տոկոսագումարի առավելագույն չափի որոշում՝ հիմք ընդունելով պարտքի հարաբերակցությունը որևէ այլ ցուցանիշի:

Որպես կանոն՝ առավելագույն չափը գերազանցող տոկոսագումարները կամ չեն նվազեցվում հարկման բազայից կամ դասակարգվում են որպես շահաբաժին:

Այս հարաբերություններում կիրառվում է նաև պարզած ձևով հեռավորության սկզբունքը, այսինքն՝ թույլատրելի է այն պարտքը, որը անկախ պարտատերը կցանկանա տրամադրել ընկերությանը, իսկ պարտապանը կարող է ընդունել: Այս մոտեցումը յուրաքանչյուր գործարքի փաստերի և հանգամանքների վերլուծություն է պահանջում հարկման բազայից թույլատրելի նվազեցվող տոկոսագումարը որոշելու համար և այստեղ կիրառելի են տրանսֆերային գնագոյացման կանոնները:

<Հարաբերակցության ցուցանիշի> մոտեցումը, ի տարբերություն պարզած ձևով հեռավորության սկզբունքի, նախապես հստակ սահմանված կանոն է և երկրները տարբեր կանոններ են սահմանում այս մոտեցումը կյանքի կոչելու համար: Դրանք կարող են

ներդաշնակեցվել պարզաձև ձևով հեռավորության սկզբունքի հետ կամ հակառակը: Եթե դրանք ներդաշնակեցված են, ուրեմն հարկ վճարողները կարող են վստահ լինել, որ տոկոսագումարը ցուցանիչը գերազանցելու դեպքում միայն գերազանցող մասը կարող է վիճարկվել պարզաձև ձևով հեռավորության սկզբունքով: Այլ երկրներ կիրառում են պարտք/կապիտալ (debt to equity), մի փոխկապակցված մասնակցի գծով ներքին պարտք/ կապիտալ (single related party internal debt to equity), ներքին օտարերկրյա պարտք/ ներքին օտարերկրյա կապիտալ (total internal foreign debt to total internal foreign equity), ներքին օտարերկրյա պարտք/կապիտալ (total internal foreign debt to equity), ներքին պարտք/կապիտալ (total internal debt to equity), տոկոսագումար/ գործառնական շահույթ կամ կանխիկի հոսքերի չափանիշ (amount of interest to operating profit or a measure of cash flow):

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ առաջարկում ենք ի լրումն ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված փոխառություն/կապիտալ հարաբերակցության ցուցանիչի հետ սահմանել նաև փոխկապակցված անձանց փոխառություններին վերաբերող առավելագույն ցուցանիչ՝ ի տարբերություն ներկայումս նախագծում ամրագրված՝ ընկերության հետ փոխկապակցված անձանց անտոկոս կամ ցածր տոկոսով փոխառությունների տրամադրումը շահաբաժին դիտարկելու մոտեցման:

2. Շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը ոչ ուշ, քան հունիսի 30-ը ձեռք բերելու դրույթը վերացնելը ողջունելի է, սակայն պետք է նշել, որ արդեն հունիս ամիսն է և շատ կազմակերպություններ արդեն իսկ այս ամսվա վերջին խնդրի առջև են կանգնելու: Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, համաձայն որի՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով, առաջարկում ենք սույն նախագծում հետադարձ ուժ նախատեսել այս դրույթի համար: